ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2.1

«ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-02/18» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 0042, Զվարթնոց օ/կ

26 փետրվարի 2018
ժամը 11:00

Մասնակցում էին՝

<u>Հանձնաժողովի նախագահ՝</u>

Ա. Ղոսալմյան — Ընդհանուր բաժնի պետ

<u>Հանձնաժողովի անդամներ՝</u>

Կ. Խաչատրյան — ԱԱՎ գլխավոր մասնագետ

Դ. Սարուխանյան — ՕՍ և ՕԵԿ վարչության պետի տեղակալ

Ս. Մայիլյան — ՀՀ բաժնի գլխավոր մասնագետ

Հ. Եղիազարյան — ԹՊ վարչության գլխավոր մասնագետ-տեսուչ

<u>Հանձնաժողովի քարտուղար՝</u>

Ա. Խաչատրյան — Ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետ

Օրակարգ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց կասեցված նիստը շարունակելու մասին: «ՔԱԳՎ-ԳՀԱՊՁԲ-02/18» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակում արձանագրեց, որ «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի կողմից armeps.am էլեկտրոնային համակարգով ներկայացված Հավելված 5-ում գնային առաջարկը ներկայացված է միայն թվերով և բացակայում է տառերով գրված:

Հանձնաժողովը միաձայն որոշեց.

1. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերը, հրավերի 8.1 կետի երկրորդ պարբերությունը և 8.2 կետը «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ-ի հայտերը մերժվում են:
2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետը, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝

1-ին չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էվրի Դեյ» ՓԲԸ-ին:

2. Ծանուցել «Էվրի Դեյ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 01.03.2018թ.) էլեկտրոնային եղանակով ներկայացնել հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04 թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը

ա) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ,

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Ա. Ղոսալմյան		**Հանձնաժողովի նախագահ**
Կ. Խաչատրյան		**Հանձնաժողովի անդամ**
Դ. Սարուխանյան		**Հանձնաժողովի անդամ**
Ս. Մայիլյան		**Հանձնաժողովի անդամ**
Հ. Եղիազարյան		**Հանձնաժողովի անդամ**
Ա. Խաչատրյան		**Հանձնաժողովի քարտուղար**